ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-—» ———— 2024թ. **N___ Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է՝

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ բաժնով՝

«7. ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ՎԱՐՔԱԳԾԻ ԿԱՆՈՆՆԵՐ

114. Ավագանու յուրաքանչյուր անդամ, որպես քաղաքական պաշտոն զբաղեցնող անձ, պարտավոր է պահպանել «Հանրային ծառայության մասին» օրենքի 33-րդ հոդվածով նախատեսված շահերի բախման կանոնները:

115. Ավագանու անդամը, ով ունի ֆինանսական, մասնավոր կամ անձնական բնույթի որևէ շահ ավագանու օրակարգում ընդգրված որևէ հարցի, որոշման նախագծի կամ կապված ավագանու որևէ գործողության հետ, այդ թվում՝ այդ որոշմամբ կամ գործողությամբ որևէ անձի կամ կազմակերպության վրա որևէ ներգործության կամ փոխհարաբերության հետ, պետք է ավագանու նիստը սկսելուց առաջ՝ մինչև օրակարգը հաստատելը, հանդես գա հայտարարությամբ՝ բացահայտելով տվյալ շահի կամ շահագրգռվածության բնույթն ու բովանդակությունը, բոլոր ներգրավված կողմերին և մյուս վերաբերելի հանգամանքները: Ավագանու անդամները կարող են հարցեր ուղղել սույն հայտարարության կապակցությամբ:

116. Ավագանու անդամի վերը նշված հայտարարությունը, ինչպես նաև հարց ու պատասխանը պետք է ներառվեն ավագանու տվյալ նիստի արձանագրության մեջ:

117. Վերը նշված հայտարարությունից ու քննարկումներից հետո ավագանու անդամը կարող է ինքն իրեն որակազրկել տվյալ հարցի մասով քվեարկությանն մասնակցելու իրավունքից, իսկ եթե նա դա չի անում, ապա պարտավոր է ներկայացնել բացատրություն քվեարկությանը մասնակցելու իր որոշման մասին:

118. Ավագանու շահագրգիռ անդամի կողմից ինքնաբացարկ չհայտնելու դեպքում, ավագանին պարտադիր անցկացնում է քվեարկություն, մինչև օրակարգի հաստատումը, և ներկաների ձայների մեծամասնությամբ, կարող է ավագանու շահագրգիռ անդամին զրկել քննարկվող հարցի քննարկմանը և քվեարկությանը մասնակցելու իրավունքից:

119. Ավագանու անդամի կողմից վերը նշված բացահայտումը պետք է առնվազն ներառի հետևյալը՝

1) ցանկացած ընկերության, կազմակերպության կամ ձեռնարկության անվանումը, անկախ կազմակերպաիրավական ձևից ու գրանցման վայրից, որն ազդվել/ուղղորդվել է կամ կարող է ազդվել/ուղղորդվել, կառավարվել է կամ կարող է կառավարվել ավագանու տվյալ անդամի կամ նրա մերձավոր ազգականի (կին, ամուսին, երեխա, ծնող) գործողություններից, կամ որոնց ավագանու անդամը կամ նրա մերձավոր ազգականը եղել է հիմնադիր, տնօրեն, բաժնետեր, պարտատեր, սեփականատեր, գործընկեր, պայմանագրի կողմ, որևէ ներկայացուցիչ, որևէ գործակալ կամ որևէ աշխատակից:

2) իր կամ իր մերձավոր ազգականի կարգավիճակը, պաշտոնի նկարագրությունը, ստացված վարձատրությունը վերջին 36 ամսիների ընթացքում:

3) Իր կամ իր մերձավոր ազգականի ներգրավածությունը ավագանու օրակարգում ընդգրկված հարցի կամ գործողության առնչությամբ, այդ թվում՝ իր կամ իր մերձավոր ազգականի վրա այդ որոշման հնարավոր ազդեցությունը, այդ թվում՝ ֆինանսական:

120. Ավագանու անդամները, այդ թվում՝ քաղաքապետը և փոխքաղաքապետերը, պետք է խստորեն պահպանեն վարքագծի հետևյալ կանոնները՝

1) Ավագանու անդամը պետք է պահպանի ՀՀ Սահմանադրության և օրենքների պահաջները, սույն կանոնակարգը և ներքին ընթացակարգերը, համընդհանուր պատշաճության կանոնները և դրսևորի օրինակելի վարքագիծ:

2) Ավագանու անդամը պետք է լինի հարգալից ավագանու մյուս անդամների, զանգվածային լրատվության միջոցների ու հանրության հետ իր շփումներում, չօգտագործի վիրավորական բառեր և արտահայտություններ:

3) Ավագանու անդամը չի կարող քաղաքացիներից կամ կազմակերպություններից ընդունել նվերներ կամ շնորհակալական բնույթի վարձատրություն իր պաշտոնական գործողությունների կատարման հետ կապված: Նման նվեր կամ վարձատրություն ստանալու դեպքում նա պարտավոր է տասն օրվա ընթացքում այդ նվերը կամ վարձատրությունը համապատասխան բացատրական գրությամբ փոխանցել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմ:

121. Ավագանու ցանկացած անդամ կարող է նախաձեռնել ավագանու անդամի վարքագծի կանոնների խախտման ընթացակարգ, եթե գտնում է, որ ինքը կամ ավագանու մեկ այլ անդամ խախտել է սույն կանոնակարգի դրույթները: Նման դեպքում ավագանու անդամը կամ անդամները համատեղ գրավոր դիմում են ներկայացնում քաղաքապետին կամ նրա տեղակալին (եթե խախտում թույլ տված ենթադրյալ անձը քաղաքապետն է)՝ նշելով ենթադրյալ խախտում թույլ տված անձի անուն, ազգանունը, պաշտոնը, ենթադրյալ խախտման նկարագրությունը և հիմնավորումները, այդ թվում՝ կանոնակարգի կետերը, որոնք ենթադրաբար խախտվել են:

122. Քաղաքապետը կամ փոխքաղաքապետը սույն կանոնակարգի 121-րդ կետում նշված դիմումը ստանալու պահից 7-օրյա ժամկետում ուղարկում է իրավաբանական վարչություն իրավական եզրակացության, որը պետք է տրամադրվի 20 օրվա ընթացքում: Եզրակացությունը ստանալուց անմիջապես հետո քաղաքապետը կամ փոխքաղաքապետը տվյալ հարցը մտցնում է առաջիկա ավագանու նիստի օրակարգ՝ կցելով սկզբնական դիմումը և իրավական եզրակացությունը:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Ն 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ավագանու գործող կանոնակարգի մեջ բացակայում է ավագանու անդամի վարքագծի կանոնների մասին որևէ նշում. այդ հարցն առհասարակ կանոնակարգված չէ գործող կանոնակարգով, ուստի կա անհրաժեշտություն կարգավորելու ավագանու անդամների վարքագիծը՝ սահմանելով համընդհանուր ընդունված վարքագծի կանոններ:

Սույն կանոններն ուղղված են ավագանու անդամների պատշաճ վարքագիծն ապահովելուն, ինչպես նաև հովանավորչությունը ու կոռուպցիոն դրսևորումները հնարավորինս նվազեցնելուն:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան